ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱԼԵԶ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արալեզ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Արալեզ, 6-17-37, aralezgg@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 25-Ա

ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ պարբերության պահանջներով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1.Արալեզ հ համայնքի 2018թ. բյուջեում փոփոխություններ կատարելու մասին
/զեկ. հ/դ Մ. Հ. Թևոնյան/

2.Արալեզ համայնքի տարածքում 2019թ.-ի համար տեղական տուրքերի և վճարների գոտիավորման դրույքաչափերի սահմանման մասին
/զեկ. հ/դ Մ. Հ. Թևոնյան/

3. Արալեզի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին
/զեկ. հ/դ Մ. Հ. Թևոնյան/

4.Նորատունկ այգի հիմնելու թույլտվության մասին
/զեկ. հ/դ Մ. Հ. Թևոնյան/

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՐՇԱԿՅԱՆ ԱԻԴԱ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐԾՐՈՒՆ

ՇԱՄԻՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՉԱԹԱԼՅԱՆ ՆՇԱՆ

ՏԵՐՏԵՐՅԱՆ ՍՈՒՍԱՆ

Համայնքի ղեկավար **ՄԱՐՏԻԿ ԹԵՎՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱԼԵԶ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արալեզ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Արալեզ, 6-17-37, aralezgg@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 26-Ն

ՀԱՄԱՅՆՔԻ 2018Թ. ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Համայնքի 2018 թ բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները՝
Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից հատկացնել՝
ա/ << Աղբահանություն և սանիտարական մաքրում>> գործառնական դասակարգման /05.01.01.51/ ծրագրի տնտեսագիտական դասակարգման 4269 հոդվածին 100000 /մեկ հարյուր հազար/ դրամ:
բ/ <<Մշակույթի տներ, ակումբներ>> գործառնական դասակարգման /08.02.03.51/ ծրագրի տնտեսագիտական դասակարգման 4251 հոդվածին 300000/երեք հարյուր հազար / դրամ:
գ/ <<Ընդհանուր բնույթի հարաբերություններ>> գործառնական դասակարգման /04.01.01.55/ ծրագրի տնտեսագիտական դասակարգման 4239 հոդվածին 330000/երեք հարյուր երեսուն հազար / դրամ, 4269 հոդվածին 350000 /երեք հարյուր հիսուն հազար դրամ:
դ/ << Հանգիստ, մշակույթ, կրոն>> այլ դասեր գործառնական դասակարգման /08.05.01.55/ ծրագրի տնտեսագիտական դասակարգման 4269 հոդվածի պլանը ավելացնել 400000/չորս հարյուր հազար / դրամ:
Վարչական բյուջեի պահուստային ֆոնդը սահմանել 3379500 /երեք միլիոն երեք հարյուր յոթանասունինները հազար հինգ հարյուր/ դրամ:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՐՇԱԿՅԱՆ ԱԻԴԱ
ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐԾՐՈՒՆ
ՇԱՄԻՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ
ՉԱԹԱԼՅԱՆ ՆՇԱՆ
ՏԵՐՏԵՐՅԱՆ ՍՈՒՍԱՆ

Համայնքի ղեկավար՝ ՄԱՐՏԻԿ ԹԵՎՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱԼԵԶ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արալեզ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Արալեզ, 6-17-37, aralezgg@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 27-Ն

ԱՐԱԼԵԶ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՈՒՄ 2019թ.-Ի ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 18-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին » օրենքի 9 - 14 հոդվածների և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 6-րդ հոդվածի պահանջներով

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Սահմանել Արալեզ համայնքի տարածքում 2019թ. -ի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը: /Հավելվածը կցվում է/:

Դեմ -0 Ձեռնպահ -0

Կողմ -5

ԱՐՇԱԿՅԱՆ ԱԻԴԱ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐԾՐՈՒՆ

ՇԱՄԻՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՉԱԹԱԼՅԱՆ ՆԵԼԼԱ

ՏԵՐՏԵՐՅԱՆ ՍՈՒՍԱՆ

Համայնքի ղեկավար՝ **ՄԱՐՏԻԿ ԹԵՎՈՆՅԱՆ**

Հավելված 1
ՀՀ Արարատի մարզի
Արալեզ համայնքի ավագանու
2019-ի դեկտեմբերի 7-ի N 27-Ն որոշման

Արալեզ համայնքի տարածքում 2019թ.համար սահմանել տեղական տուրքերի և վճարների ստորև ներկայացրած դրույքաչափերը.

1.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրք սահմանել՝

Հիմնական օբյեկտների համար

ա) մինչև 300 ք/մ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար 7500դրամ.

բ) սույն կետի ,աե ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա) 201-ից մինչև 500 ք/մ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15000 դրամ,

բբ) 501-ից մինչև 1000 ք/մ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2500դրամ,

բգ) 1001-ից մինչև 3000 ք/մ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25000 դրամ,

բդ) 3001-ից և ավելի ք/մ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝5000 դրամ.

Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ) մինչև 20 ք/մ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1500 դրամ

դ) 20 նավելի ք/մ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2500 դրամ

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 1500 դրամ.

բ) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի , աե) ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

գ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այ կառույցների (այդ թվում ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 2500 դրամ

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 ք/մ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5000 դրամ,

բ. 26-ից մինչև 50 ք/մ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչհիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6000 դրամ,

գ. 51-իցմինչև 100 ք/մ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 8000 դրամ,

դ. 101-ից մինչև 200 ք/մ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական

շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10000 դրամ,
. 201-ից մինչև 500 ք/մ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական
շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 13000 դրամ,
501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական
շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 25000 դրամ:
) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝
ա. մինչև 26 ք/մ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական
շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5000 դրամ,
բ. 26-ից մինչև 50 ք/մ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում
վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6000 դրամ,
գ. 51-ից մինչև 100 ք/մ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում
վաճառքի կազմակերպման դեպքում՝ 8000 դրամ,
դ. 101-ից մինչև 200 ք/մ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների
ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10000 դրամ,
ե. 201-ից մինչև 500 ք/մ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում
վաճառքի կազմակերպման դեպքում՝ 13000 դրամ,
զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների
ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 25000 դրամ:
5. Համայնքի տարածքում՝
ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում
է յուրաքանչյուր օրվա համար 175 դրամ՝մեկ ք/մ-ի համար:
բ) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական
տուրքը յուրաքանչ ուր եռամսյակի համար սահմանվում է՝
հիմնական շինությունների ներսում՝
ա. մինչև 26 ք/մ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2500 դրամ,
բ. 26-ից մինչև 50 ք/մ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4000 դրամ,
գ. 51-ից մինչև 100 ք/մ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 5000 դրամ,
դ. 101-ից մինչև 200 ք/մ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 7500 դրամ,
ե. 201-ից մինչև 500 ք/մ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝10000 դրամ,
զ. 501 և ավելի ք/մ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝15000 դրամ,
Ոչ հիմնական շինությունների ներսում՝
ա. մինչև 26 ք/մ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 500 դրամ,
բ. 26-ից մինչև 50 ք/մ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝1000 դրամ,
գ. 51-ից մինչև 100 ք/մ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝1500 դրամ
դ. 101-ից մինչև 200 ք/մ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝3000 դրամ,
ե. 201-ից մինչև 500 ք/մ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 6000 դրամ,
զ. 501 և ավելի ք/մ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15000 դրամ:
գ) Հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի
կետերում հեղուկ վառելիքին (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և
տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար
սահմանվում է 200000 դրամ
դ) Խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային
գազերի մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և
նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար
տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 30000 դրամ:
5^1. Համայնքի տարածքում՝ թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի
մանրածախ առուվաճառքի
թույլտվության համար տեղական տուրքը սահմանել
յուրաքանչյուր տարվա համար՝ 25000 դրամ:
6. Համայնքիտարածքում՝ առևտրի, հանրայինսննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի
կազմակերպման օբ յեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը
24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվ ահամար
սահմանվում է՝
ա) առևտրի օբյեկտների համար՝ 25 000 դրամ.
բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50 000 դրամ.

գ) բաղնիքների (սաունաների) համար՝ 250 000 դրամ.
դ) խաղատների կազմակերպման համար՝ 500 000 դրամ.
ե) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250 000 դրամ.
զ) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 75 000 դրամ:

7. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝
ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանքգով ազդող արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ.
բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1750 դրամ.
գ) այլ արտաքին գովազդի համար՝ 750 դրամ.
դ) սոցիալական գովազդի համար՝ 0 դրամ:

7.1. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդի դատարկ գովազդային վահանակների մեկ քառակուսի մետրի դիմաց սահմանվում է տեղական տուրք՝համայնքում օրենքով նախատեսված կարգով այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով:

7.2. Եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը, ապա համայնքի բյուջե պետք է վճարի յուրաքանչյուր քառակուսի մետրի համա ոօրենքով նախատեսված կարգով համայնքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ը՝ այդ գովազդի մակերեսին համապատասխան:

8. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սամանվում է 0 դրամ:
Համայնքի անվանումը ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 75 000 դրամ:

9. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) Ծառայությունի իրականացնելո ւթույլտվությա ն համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 5000 դրամ:

9.1. Համայնքի տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և (կամ) մատուցելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացի տարվա համար սահմանվում է 250 000 դրամ:

10. Համայնքի տարածքում մասնավոր գերեզմանատան շահագործման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվ ում է յուրաքանչյուր տարվա համար՝
ա) 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 1250000 դրամ.
բ) 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 2500000 դրամ.
գ) 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 3500000 . դրամ.
դ) 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 5000000 դրամ:

11. Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող.
ա/ Հողերի մրցույթ կազմակերպելու դեպքում մասնակիցներից վճար - 1000 դրամ
բ/ Հողերը օտարելու, աճուրդներ կազմակերպելու դեպքում մասնակիցներից վճար – 5000դրամ

12.Աղբահանության վճարի սակագին սահմանել յուրաքանչյուր ամսվա համար՝
1. Ազգաբնակչությունից մեկ շնչի համար - 150 դրամ
2. Իրավաբանական անձանցից և անհատ ձեռնարկատերերից.
1) առևտրի (այդ թվում՝ շուկաների), հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ իրականացվող շինությունների մասով՝ 1 քմ - 30 դրամ
2) արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների մասով՝ 1քմ-6 դրամ
3) կրթական, մշակութային , առողջապահական շինությունների մասով՝ 1քմ - 3 դրամ
Ընթացիկ տարվա համար տեղական վճարի դրույքաչափերի փոփոխություն չի կարող կատարվել:

Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Լ.Վ. Խլոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱԼԵԶ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արալեզ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Արալեզ, 6-17-37, aralezgg@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 28-Ա

ԱՐԱԼԵԶԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով և << Նորմատիվ Իրավական ակտերի մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով՝

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հաստատել Արալեզի համայնքապետարանի աշխատակիցների և մշակույթի տան աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն NN 1-2 հավելվածների
2.Ուժը կորցրած ճանաչել Արալեզ համայնքի ավագանու 16.01.2017թ. <<Արալեզի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> 2-Ն որոշման NN 1- 2 հավելվածները
3. Առաջարկել Արալեզ համայնքի ղեկավարին Արալեզի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կատարելու առաջարկությամբ մեկշաբաթյա ժամկետում սահմանված կարգով դիմել ՀՀ կառավարության լիազորված պետական կառավարման մարմին
4.Սույն որոշման 1-ին և 2-րդ կետերն ուժի մեջ են մտնում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կողմից համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կամ լրացումներ կատարելու մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՐՇԱԿՅԱՆ ԱԻԴԱ
ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐԾՐՈՒՆ
ՇԱՄԻՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ
ՉԱԹԱԼՅԱՆ ՆՇԱՆ
ՏԵՐՏԵՐՅԱՆ ՍՈՒՍԱՆ

Համայնքի ղեկավար՝ **ՄԱՐՏԻԿ ԹԵՎՈՆՅԱՆ**

Հավելված 1
Արալեզ համայնքի ավագանու
07.12.2018թ. 28-Ա որոշման

ԱՐԱԼԵԶ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2019Թ. ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ

1. Աշխատակիցների թվաքանակը-12
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափը

	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԴՐՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ /ՀՀ ԴՐԱՄ/	ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁ
1	Համայնքի ղեկավար	-	300000	3600000
	Հայեցողական պաշտոններ			
2	Համայնքի ղեկավարի տեղակալ	1	150000	1800000
	Համայնքային ծառայության պաշտոններ			
3	Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար /1.2-1/	1	200000	2400000
4	Համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ /2.3-1/	1	195000	2340000
5	Համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ /3.1-1/	1	130000	1560000
6	Համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ /3.2-1/	1	108000	1296000
7	Համայնքապետարանի աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ /3.3-1/	1	89000	1068000
	Քաղաքացիական աշխատանք			
8	Համակարգչային օպերատոր	1	104000	1248000
9	Անասնաբույժ	1	35000	420000
	Տեխսպասարկման անձնակազմ			
10	Վարորդ	1	89000	108000
11	Պահակ	1	73000	876000
12	Համայնքապետարանի հավաքարար	1	73000	876000
	Ընդամենը	11	1546000	18552000

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Լ. Վ. ԽԼՈՅԱՆ

Հավելված 2
Արալեզ համայնքի ավագանու
07.12.2018թ. 28-Ա որոշման

ԱՐԱԼԵԶ ՀԱՄԱՅՆՔԻ 2019Թ. ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ

1. Աշխատակիցների թվաքանակը-9

2. Աշխատակիցների հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափը

	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԴՐՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ /ՀՀ ԴՐԱՄ/	ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁ
	Քաղաքացիական աշխատանք			
1	Մշակույթի տան տնօրեն	1	110000	1320000
2	Գեղմասվար	1	73000	876000
3	Գրադարանավար- Դաշնամուրի դասատու	1	78000	936000
4	Պարուսույց	1	73000	876000
5	Էստրադային խմբի ղեկավար	1	73000	876000
6	Ֆիզ. ղեկ	1	73000	876000
	Տեխսպասարկման անձնակազմ			
7	Մշակույթի տան և գրադարանի հավաքարար	1	73000	876000
8	Այգեպան -պարտիզպան	1	73000	876000
9	Այգեպան- պարտիզպան	1	79000	948000
	Ընդամենը	9	626000	8460000

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Լ. Վ. ԽԼՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱԼԵԶ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արալեզ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Արալեզ, 6-17-37, aralezgg@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 29-Ա

ՆՈՐԱՏՈՒՆԿ ԱՅԳԻ ՀԻՄՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀՈՂԻ ՀԱՐԿԻՑ ԱԶԱՏՎԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հողի հարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի գ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավար Մարտիկ Թևոնյանի առաջարկը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Համայնքի ներքոհիշյալ բնակիչներին 2019թ- ից ազատել հողի հարկից:
Դեղձի այգի հիմնելու համար ազատել չորս տարի ժամանակով՝
1.Ծատուրյան Եղիսաբեթ ծածկագիր 103-029- 0,37հա
2.Աղաբաբյան Ատոմ ծածկագիր 132-025- 0,659հա
3.Թևոնյան Վազգեն ծածկագիր 126-003- 0,305հա
4.Սիմոնյան Վրթանես ծածկագիր 133-008- 0,798հա
5.Սիմոնյան Վրթանես ծածկագիր 133-009- 0,618հա
6.Սիմոնյան Վրթանես ծածկագիր 143-004- 1,093հա
7.Սիմոնյան Վրթանես ծածկագիր 143-005- 1,015հա
8.Հակոբյան Գրիշա ծածկագիր 102-005- 0 .570հա
Խաղողի այգի հիմնելու համար ազատել երեք տարի ժամանակով
1.Թադևոսյան Սամվել ծածկագիր 130-004- 0.575հա

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՐՇԱԿՅԱՆ ԱԻԴԱ
ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐԾՐՈՒՆ
ՇԱՄԻՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ
ՉԱԹԱԼՅԱՆ ՆՇԱՆ
ՏԵՐՏԵՐՅԱՆ ՍՈՒՍԱՆ

Համայնքի ղեկավար **ՄԱՐՏԻԿ ԹԵՎՈՆՅԱՆ**